ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՀԱՆԴՈՒՐԺՈՂ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի, Հրանտ Անանյանի, Արայիկ Ղազարյանի, Մելանյա Առուստամյանի, Կարապետ Աղաջանյանի և Սիմոն Բաբայանի,

քննարկելով դատավորների և փաստաբանների նկատմամբ հասարակության մի հատվածի կողմից դրսևորվող անհանդուրժող վարքագիծը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Վերջին շրջանում հասարակության մի հատվածի մոտ նկատելի է լարվածություն օբյեկտիվորեն զգայուն որոշ քրեական գործերի առնչությամբ, ինչի կապակցությամբ թիրախավորվում է նաև փաստաբանության ինստիտուտը, որը կոչված է ապահովելու իրավաբանական օգնության տրամադրումը յուրաքանչյուրին՝ անկախ մեղսագրվող արարքի բնույթից և հանրային վտանգավորության աստիճանից:

Այս առիթով ՀՀ փաստաբանների պալատը, Մարդու իրավունքների պաշտպանը և ՀՀ արդարադատության նախարարը հանդես են եկել համապատասխան հայտարարություններով:

ՀՀ փաստաբանների պալատը նաև օրենքների նախագծեր է ներկայացրել պատկան մարմնին՝ մասնագիտական գործունեության կապակցությամբ փաստաբանին վիրավորելու կամ զրպարտելու արարքները քրեականացնելու նպատակով:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն արձանագրում է, որ հասարակության մի հատվածի կողմից փաստաբաններին և դատավորներին վիրավորելու (հայհոյելու) վարքագիծը չի փոխվել: Առ այսօր այդ վարքագիծը շարունակվում է, իսկ գործադիր իշխանությունը համարժեք միջամտություն չի ցուցաբերում:

25 դեկտեմբերի 2018թ.
թիվ 23-Ա

Բոլոր ժամանակներում էլ մարդը, նրա իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Դատավորները և փաստաբաններն իրավական գործընթացներում տարբեր դերեր ունեն, բայց երկու մասնագիտությունների տեր անձիք էլ անհրաժեշտ են օրենքի համաձայն իրականացվող իրավական բոլոր գործընթացներում արդար և արդյունավետ լուծում գտնելու համար:

Միավորված ազգերի կազմակերպության կողմից կազմված «Դատարանների անկախության հիմնարար սկզբունքներ» փաստաթղթի 2-րդ պարբերությունում սահմանվում է, որ դատական իշխանությունը պետք է դատարան ներկայացված գործերով որոշումներ ընդունի՝ պահպանելով անաչառությունը, հենվելով փաստերի վրա և օրենքին համապատասխան, առանց որևէ անձի կողմից կամ որևէ պատճառով ուղղակի կամ անուղղակի սահմանափակումների, անհարկի ազդեցության, դրդապատճառների, ճնշումների, սպառնալիքների կամ միջամտությունների:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն իր անհանգստությունն է հայտնում նաև դատավորների նկատմամբ կիրառվող ճնշումների կապակցությամբ:

Արդարադատությունը ժողովրդավարական հասարակության առանցքային բաղադրիչն է: Արդարադատության միջոցով փորձ է արվում լուծելու կողմերի միջև ծագած վեճերը, իսկ արդարադատության արդյունքում կայացրած որոշումների միջոցով՝ իրականացնելու թե «կարգավորիչ» և թե «կրթական» գործառույթ՝ քաղաքացիներին ուղղորդելով, տրամադրելով տեղեկություններ և նրանց մեջ ձևավորելով համոզվածություն օրենքի և դրա գործնական կիրառման հարցում[1]:

Դատարաններն օրինական իրավունքների և պարտականությունների հաստատման և դրանց վերաբերյալ վեճերի լուծման պատշաճ հարթակ են հանդիսանում և հասարակության կողմից պետք է ընկալվեն որպես այդպիսին:

Փաստաբանների պալատի խորհուրդը նշում է, որ դատական իշխանության դերակատարման ընկալումը ժողովրդավարական հասարակություններում, հատկապես այն ընկալումը, որ դատավորը պարտավոր է օրենքը կիրառել արդար և անաչառ եղանակով՝ առանց ենթարկվելու սոցիալական և քաղաքական գործոններով պայմանավորված ճնշումների, տարբեր է այլ երկրներում, քանի որ ելնելով մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններից, դատարանի գործունեության նկատմամբ վստահության մակարդակը բոլոր երկրներում նույնը չէ:

Դատարանը կհանդիսանա ժողովրդավարական սահմանադրական համակարգերի անկյունաքար, եթե դատական իշխանությունը գործի իշխանության մյուս թևերից լիովին անկախության պայմաններում:

Հասարակության մեծ հատվածի վստահությունը գործադիր և օրենսդիր իշխանության գործունեության նկատմամբ՝ կապված քաղաքական վերջին իրադարձությունների հետ, դատական իշխանությանն անուղղակիորեն թիրախ է

[1] Եվրոպական գերագույն դատարանների նախագահների հինգերորդ հանդիպման եզրակացությունները, 1999թ. հոկտեմբերի 6-8, Լյուբլյանա, պարբերություն 2:

դարձնում հասարակության մի հատվածի առջև, եթե դատարանի գործողությունն առերևույթ չի համընկնում գործադիր իշխանության ակնկալիքին:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը գտնում է, որ դատավորները պաշտպանության կարիք ունեն:

Նախևառաջ, դա պայմանավորված է դատավորների այն պատասխանատու կարգավիճակով, որ նրանք ինքնաարտահայտվում են իրենց դատական ակտերով և պարտավոր չեն բացատրել դրանք մամուլում կամ հրապարակային հայտարարություններ կատարել այն գործերի վերաբերյալ, որոնք գտնվում են իրենց քննության ներքո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն անթույլատրելի է համարում փաստաբանների և դատավորների նկատմամբ իրականացվող ճնշումները, անկախ դրանց դրսևորման ձևից և ժամանակից և գտնում է, որ ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանի հրապարակային խոսքը նույնպես կարող է նպաստել այս բացասական վարքագիծը կանխելուն:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Խստորեն դատապարտել փաստաբանների և դատավորների նկատմամբ իրականացվող ճնշումները, անկախ դրանց դրսևորման ձևից և ժամանակից:

2. Զորակցություն հայտնել դատավորներին՝ հորդորելով չշեղվել իրենց սահմանադրական առաքելությունից:

3. Դիմել ՀՀ վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանին՝ առաջարկելով հանդես գալ կոչով և օգտագործել իր հեղինակությունը հասարակության մոտ իրավագիտակցության բարձրացման գործուն քայլեր կենսագործելու ուղղությամբ:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Արա Զոհրաբյան

25 դեկտեմբերի 2018թ.
թիվ 23-Ա
ք. Երևան